

ՄԱՆԻՖԵՍՏ

Մեծահասակների կրթությունը 21-րդ դարում.

Ուսումնառության զորությունն ու բերկրանքը



EUROPEAN ASSOCIATION FOR
THE EDUCATION OF ADULTS

Հրատարակիչ՝ Մեծահասակների կրթության եվրոպական ասոցիացիա (ՄԿԵԱ)
Տեքստը՝ Գինա Էբներ և Ռիկարդա Մոթշիլինգ (ՄԿԵԱ)՝ ՄԿԵԱ անդամների,
Գործադիր խորհրդի և Քարտուղարության աջակցությամբ
Էջադրումը՝ Սաննա Լեիթի
2019 թվական

Հայերեն տարբերակի հրատարակիչ՝ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակ



Ministry of
Education
and Culture

Այս հրատարակությունն իրականացվել է Ֆինլանդիայի Կրթության և մշակույթի նախարարության ֆինանսական աջակցությամբ:



Co-funded by the
Erasmus+ Programme
of the European Union

Եվրոպական Հանձնաժողովի աջակցությունը սույն հրատարակությանը չի հանդիսանում վերջինիս բովանդակության հաստատում: Այն արտացոլում է միայն հեղինակների տեսակետները, և Հանձնաժողովը պատասխանատվություն չի կրում այստեղ զետեղված բովանդակության օգտագործման համար:



ՄԱՆԻՖԵՍՏ

Մեծահասակների կրթությունը

21-րդ դարում.

Ուսումնառության զորությունն ու բերկրանքը

Մեծահասակների կրթության եվրոպական ասոցիացիան (ՄԿԵԱ) սույն Մանիֆեստով առաջարկում է կերտել Սովորող Եվրոպա՝ Եվրոպա, որը դեպի ապագա է շարժվում դրական տրամադրվածությամբ՝ հիմնվելով անհրաժեշտ հմտությունների, գիտելիքի ու կարողությունների վրա: Մենք առաջարկում ենք համաեվրոպական քայլ անել դեպի գիտելիքահեն հասարակություն, որն ի վիճակի կլինի դիմակայելու մեր ժամանակների մարտահրավերներին: Նման մոտեցումը ենթադրում է, որ այսօր ևեթ մեծահասակների կրթությանն ուղղված կայուն ներդրումներ կատարվեն եվրոպական, ազգային, ռեգիոնալ և տեղական մակարդակներում: Նման ներդրման ազդեցությունը տեսանելի կլինի երկարաժամկետ կտրվածքով՝ մրցունակության, բարեկեցության, առողջ բնակչության, զարգացման, հավասարության, կայունության և այլ տեսանկյուններից:

Մեծահասակների կրթությունն ունի հասարակությունները վերափոխելու և կյանքեր փոխելու ներուժ, այն մարդու իրավունք է և համընդհանուր արժեք: ՄԿԵԱ-ի համոզմունքն է, որ մեծահասակների ուսումնառությունն ու կրթությունը պետք է խրախուսվի եվրոպական մակարդակով: Այս մանիֆեստն ուրվագծում է, թե ինչպիսի ներդրում է ունենալու մեծահասակների կրթու-

յունը համաեվրոպական դրական զարգացումներում: Այնուամենայնիվ, այս հանգրվանին հասնելու համար անհրաժեշտ են զգալի հանրային ներդրումներ մեծահասակ ուսումնառուների և մեծահասակների կրթության կազմակերպությունների մեջ: Մեծահասակների կրթությունը պետք է նաև հստակորեն ներառվի ցկյանս ուսումնառության այնպիսի ընդհանուր մարտավարության շրջանակներում, որը հաշվի է առնում և կարևորում է ուսումնառության բոլոր ոլորտներն ու ձևերը (ֆորմալ, ոչ ֆորմալ, ինֆորմալ):

Սույն մանիֆեստով մենք մի կողմից ցանկանում ենք ընդգծել մեծահասակների կրթության տրանսֆորմատիվ հնարավորությունները, իսկ մյուս կողմից՝ ուսանելու դրական փորձառությունը: Սովորելու կարևորությունը հաճախ չի գիտակցվում, օրինակ, անհաջող դպրոցական փարձառության կամ ֆինանսական միջոցների ու ժամանակի սղության պատճառով: ՄԿԵԱ-ի նպատակն է ընդգծել սովորելու դրական ազդեցությունն ու օգուտը, քանի որ մեր ըմբռնմամբ սա է ուսուցման գործընթացից դուրս մնացածներին գրավելու ամենալավ միջոցը:

Մարտահրավերներ և լուծումներ

Մեծահասակների կրթությունը Եվրոպային սպառնացող հիմնական մարտահրավերների լուծման բանալին է: Այսօր Եվրոպայում նկատվում է անհավասարության աճ, ընդ որում ոչ միայն մարդկանց, այլ նաև տարբեր տարածաշրջանների և երկրների միջև: Ավելի ու ավելի է մեծանում եվրոպական արժեքները և ազատական ժողովրդավարությունը հարցականի տակ դնող և այլատյացություն կամ հակաեվրոպականություն քարոզող կուսակցություններին ձայն տվող եվրոպացիների թիվը: Ուստի խիստ կարևոր է մեծահասակների կրթության միջոցով մարդկանց ներգրավել գիտակցված ժողովրդավարության գործընթացներում:

Եվրոպայում ժողովրդագրական փոփոխությունների հետևանքով ակնհայտ է ենթ լինում բնակչության պատկերի փոփոխության. կյանքի միջին տևողության մեծացման հետ մեծանում է նաև ակտիվ և առողջ կենսակերպ վարելու ցանկությունը: Այն երկրներում և տարածաշրջաններում, որտեղ աշխատաշուկան զգալի փոփոխությունների է ենթարկվել, իսկ մասնագիտական վերապատրաստման հնարավորությունները սահմանափակ են, գործազրկության մակարդակը շատ բարձր է՝ հատկապես բնակչության ամենաերիտասարդ և ամենատարեց հատվածներում: Արագացող թվայնացման պայմաններում աշխատողներից, քաղաքացիներից և սպառողներից նոր հմտություններ և կարողություններ են պահանջվում: Վերջին տարիների՝ դեպի Եվրոպա փախստականների մեծ ներհոսքը հսկա մարտահրավերների առաջ է կանգնեցնում եվրոպական կառավարություններին: Թեև Եվրոպայի քաղաքա-

ցիների մի մասն իր աներկբա աջակցությունը հայտնեց նորեկներին, միգրացիան նաև ատելության և խտրականության ալիքների պատճառ դարձավ: Կլիմայի փոփոխությունը և բնապահպանական այլ մարտահրավերները շարունակում են սպառնալ Եվրոպայի (և ոչ միայն) ապագային և պահանջում են ավելի կայուն տնտեսություն, հասարակություն և ապրելակերպ՝:

Մեծահասակների կրթությունը վերոհիշյալ խնդիրներից շատերին դրական արձագանքելու միջոցն է: Այն իր նպաստն է բերում ոչ միայն անհատներին, այլև հասարակությանն ու տնտեսությանը: Մենք ցանկանում ենք տեսնել ավելի նորարար, ավելի հավասար ու կայուն Եվրոպա, որտեղ քաղաքացիներն ակտիվ և ժողովրդավարորեն մասնակցում են կառավարմանը, որտեղ մարդիկ տիրապետում են առողջ ու արդյունավետ ապրելու և գործելու համար անհրաժեշտ հմտություններին ու գիտելիքին, որտեղ հնարավոր է մասնակցել մշակութային և քաղաքացիական կյանքին երիտասարդ տարիքից մինչև ծերություն: Ստորև ՄԿԵԱ-ն ներկայացնում է փաստարկներ, ուսումնասիրություններ, օրինակներ և սովորողների պատմություններ, որոնք պարզաբանում են մեր դիրքորոշումը:



Մեծահասակների (ոչ ֆորմալ) կրթության հիմնական սկզբունքները

- Մեծահասակների կրթությունը համընդհանուր և հանրային արժեք է, որը կարող է փոխակերպել հասարակություններն ու մարդկանց կյանքը:
- Յուրաքանչյուր ոք պետք է ունենա մեծահասակների բարձրորակ կրթություն ստանալու իրավունք և հնարավորություն:
- Բոլորը կարող են սովորել՝ անկախ տարիքից և կենսափորձից:
- Խրախուսվում է բոլոր սովորողների մասնակցությունը, հատկապես՝ ցածր տարրական հմտություններով անձանց:
- Մեծահասակների կրթության առանցքային նպատակներից է խոցելի սովորողների արդյունավետ տեղեկացումն ու ներգրավումը «Մեթյուի էֆեկտ»ի (Matthew' effect) ազդեցությունը նվազեցնելու համար:
- Կրթական ծրագրի մշակման, մեթոդաբանության, ընթացքի և արդյունքի առանցքը սովորողն է:
- Ոչ ֆորմալ մեթոդների և մեթոդաբանությունների կիրառմամբ խրախուսել ստեղծագործական մտածողությունը, օգտագործել սովորողների ունեցած գիտելիքն ու հմտությունները և կիսվել ոգեշնչող հաջողության պատմություններով:
- Համապատասխան մեթոդների կիրառման, ուսումնառության բարձր որակի ապահովման և հաջողված ուսումնական գործընթաց ունենալու գրավականը բարձրակարգ դասընթացավարների, ուսուցիչների և աշխատողների առկայությունն է:
- Կարողությունների զարգացումն ու նորարարությունը մեծահասակների կրթությամբ զբաղվող կազմակերպություններում անհրաժեշտ են, որպեսզի հնարավոր լինի կանխատեսել և արձագանքել ուսուցման, դասավանդման և սովորողների կարիքների փոփոխություններին, ինչպես նաև հասարակական և տնտեսական զարգացման համատեքստում:
- Համագործակցությունը (տարածաշրջանային, եվրոպական, գլոբալ և ինտերնացիոնալ) խիստ կարևոր է մեծահասակների կրթության տեսանկյունից, ինչպես նաև փորձի փոխանակման և նորարարության փոխանցումը հնարավոր դարձնելու համար:



1) Մենք չենք ուզում այս մարտահրավերները դասակարգել ըստ կարևորության: Մենք համարում ենք դրանք հավասարապես կարևոր և այս փաստաթղթում դրանց թվարկման հերթականությունը չի ենթադրում որևէ նախապատվություն:

2) Ապացուցված է, որ կրթության ավելի ցածր մակարդակ ունեցող մարդիկ ավելի քիչ հնարավորություն ունեն մասնակցելու մեծահասակների ուսուցման ծրագրերին:

Ակտիվ քաղաքացիություն և ժողովրդավարություն



ՄԿԵԱ-ն և նրա անդամները հավատարիմ են Եվրոպային և եվրոպական արժեքներին: Մենք հավատում ենք, որ ժողովրդավարության, միջնաշխարհային շփումների, սոցիալական արդարության ու համագործակցության վրա է խարսխված այն Եվրոպան, որտեղ առաջնային են հարգանքը, մասնակցությունը և միասնականությունը: Ժողովրդավարությունն ու եվրոպական մեծահասակների կրթությունն ունեն ընդհանուր ծագում և պատմություն: Մեծահասակների կրթությունը նշանակալի ազդեցություն է ունեցել Եվրոպայում ժողովրդավարական հասարակությունների զարգացման վրա, բայց մինչույն ժամանակ նաև մեծահասակների կրթության ինստիտուտներն են ազդվել ժողովրդավարական շարժումներից: Մեծահասակների կրթության բազմաթիվ կազմակերպություններ ձևավորվել են էմանսիպացիոն շարժումների արդյունքում (բանվորների, կանանց կամ կրոնական կազմակերպություններ և այլն):

Մեծահասակների կրթությունը քննադատական մտածողության և իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման, ոգեշնչված քաղաքացիական հասարակության, գիտելիքի և փորձառության զարգացման գործիք է: Մեծահասակների կրթությունը նաև ակտիվ քաղաքացիությունը խթանելու հնարա-

վորություն է տալիս: Մեծահասակների կրթությունն անհրաժեշտ է հասարակություններում առկա իրավիճակներն ու մարտահրավերները վերլուծելու, ինչպես նաև Եվրոպայի համար գերակա խնդիրներից (ծայրահեղականացում, միգրացիա, սոցիալական անհավասարություն և այլն) դասեր քաղելու համար: Այդ խնդիրների առկայությունը ցույց է տալիս, որ ժողովրդավարական մոտեցումները, հանդուրժողականությունն ու հարգանքը վերահաստատման կարիք ունեն: Քննադատական մտածողությունը նույնպես առանցքային դեր ունի թվային աշխարհում կողմնորոշվելու համար և ենթադրում է մեղիա գրագիտության բավականին բարձր մակարդակ:

Մեծահասակների կրթությունը վերականգնում և ամրապնդում է քաղաքացիական հասարակությունը՝ ձևավորելով պատասխանատվություն, ինչպես նաև պատկանելության զգացում դեպի Եվրոպա և ժողովրդավարական ավանդույթ: Մասնակցային ժողովրդավարությունը հնարավոր է միայն հանրային լայն մասնակցության և որոշման կայացման գործընթացին իմաստավոր ներգրավման, ինչպես նաև քաղաքական և հասարակական խնդիրներին քննադատական գնահատական տալու միջոցով:





Հետազոտության տվյալներ

Պրեստոնը (2004) վերլուծել է մեծահասակների կրթության ազդեցությունը մասնակիցների քաղաքացիական կյանքի, հատկապես՝ արժեքների ձևավորման և մասնավորապես՝ հանդուրժողականության վրա: Կրթական գործընթացում անհատների մասնակցությունը որոշ չափով կանխատեսում է նաև հանրային կյանքում նրանց ներգրավվածության մակարդակը. «միջին հաշվով որքան մեծ է սովորողների ներգրավվածությունը կրթական գործընթացում, այնքան նրանք ավելի պատրաստակամ են հանրային կյանքում դրական դերակատարմանը»: Ավելին՝ մեծահասակների կրթությունը նպաստում է ռասայական հանդուրժողականության և ընտրությունների մասնակցության ցուցանիշի բարձրացմանը: Ըստ Պրեստոնի՝ ուսուցումը ազդում է ինֆորմալ և ֆորմալ քաղաքացիական մասնակցության վրա: Այն օգնում է անհատներին կառուցել, պահպանել, տարածել և վերակազմավորել իրենց սոցիալական հաղորդակցման ցանցերը: Ի հավելումս, ուսուցումն ազդում է արժեքների ձևավորման վրա, օրինակ՝ մասնակիցների մոտ նկատվել է հանդուրժողականության, ըմբռնման և հարգալից վերաբերմունքի փոփոխություն. (<http://discovery.ucl.ac.uk/10015019/>): Քաղաքացիական և սոցիալական ներգրավվածությունը որպես ուսուցման արդյունք ուսումնասիրվել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) կողմից (<http://www.oecd.org/education/cei/understandingthesocialoutcomesoflearning.htm>):



Հաջողված փորձ

Ուկրաինական «Տեղական ձայները ժողովրդավարության համար. երկխոսության գործիքներ տեղական համայնքում» ծրագրի շրջանակներում Միկոլայիվ շրջանի Կայուն զարգացման ակումբը նախաձեռնել է համայնքում էներգիայի սպառման հարցերին վերաբերող քննարկում, որին մասնակցել են համայնքային ակտիվիստներ, տեղական ինքնակառավարման մարմինների և մեդիայի ներկայացուցիչներ: Աշխատաժողովն անցել է տարբեր շահագրգիռ կողմերի ներգրավմամբ, իսկ հիմքում դրվել են կրթական ծրագիր և վերապատրաստման մի քանի դասընթացներ՝ տեղական զարգացմանը նպաստող էկոլոգիական և էներգախնայող գործոնների մասին: Քաղաքացիների կողմից մեծահասակների կրթության արժեքի գիտակցումը հնարավոր դարձրեց կրթական բաղադրիչների ավելի լայն ներառումը 2018-2026թթ համայնքային ռազմավարության մեջ: Սա Ուկրաինայում համայնքի միջոցներով բացված առաջին մեծահասակների կրթության կենտրոնն է և, հետևաբար, մեծահասակների կրթության առաջին ներգրավումը գործողությունների ծրագրի մեջ:

Առողջություն և բարեկեցություն



Անհավասարության զգալի դրսևորումներ կան առողջապահության ոլորտում և հետևաբար՝ կյանքի միջին տևողության վրա: Իրավիճակը շատ տարբեր չէ նույնիսկ ամենահամահավասար երկրներում: Առողջությունն ու կրթությունը փոխկապակցված են. տարիների ընթացքում մեր առողջության և բարեկեցության մասին հոգ տանելը ենթադրում է համապատասխան գիտելիքի առկայություն, հմտություններ և կյանքի ընթացքում ձեռք բերած և հղկված վարքագիծ և վերաբերմունք: Մեր հասարակությունների առողջությունը կախված է շարունակական կրթությունից:

Սովորելը մարդկանց դարձնում է ավելի ինքնավստահ, արդյունավետ և իրենց կարողություններն ու հմտությունները սթափ գնահատող, ինչը վերաճում է սեփական կյանքը և առողջությունը կառավարելու ավելի գործուն կարողության: Մեծահասակների կրթության դասընթացները հնարավորություն են տալիս մարդկանց հավաքել մի սենյակում մի կամ տարբեր խնդիրների շուրջ՝ լայնացնելով նրանց ծա-


նոթությունների շրջանակը, ինչը խիստ կարևոր է մարդկանց բարեկեցության համար: Սա նպաստում է ոչ միայն նրանց անձնական զարգացմանը, այլև շատ դրական է ազդում մասնագիտական գործունեության վրա:

Առողջապահական կրթությունը կարևոր արդյունքներ է արձանագրում բնակչության առողջության բարելավման և հանրային առողջապահական համակարգերի ծախսերի կրճատման տեսանկյունից. այն նաև ապահովում է ֆինանսական օգուտներ, քանի որ առողջ բնակչությունն աշխատում է ավելի երկար և ավելի արդյունավետ: Հետևաբար՝ առողջապահական կրթությունը վերաբերում է ոչ միայն շահառուներին, (օրինակ՝ պացիենտներին և սովորողներին) կամ ծառայություններ տրամադրողներին (օրինակ՝ առողջապահական ոլորտի մասնագետներ, կրթական անձնակազմ) այլ՝ մեզ բոլորիս: Սա առանձին ոլորտային խնդիր չէ. այն փոխկապակցված է մի շարք ոլորտների քաղաքականության հետ և պետք է դիտարկվի որպես այդպիսին:

Հետազոտության տվյալներ

Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մեծահասակների ուսումնառությանը և կրթությանը նվիրված երրորդ գլոբալ զեկույցի՝ ավելի որակյալ կրթություն ունեցող մարդիկ հակված են ավելի հստակ պատկերացում ունենալ իրենց առողջության, իրենց հասանելի բուժման մասին և ավելի հմտորեն են հոգ տանում իրենց առողջության մասին: Ըստ զեկույցի՝ ավելի լավ կրթություն ունեցողները ավելի կարճ են հիվանդանում և ավելի քիչ աշխատանքային օրեր են բաց թողնում հիվանդության պատճառով: Միջազգային ուսումնասիրությունները կրթությունը կապում են առողջության այնպիսի ցուցանիշների հետ, ինչպիսիք են առողջ վարքը և կանխարգելիչ ծառայություններից օգտվելը: Լավ կրթված մարդիկ ծխելու, ակոհոլի չարաշահման կամ ապօրինի թմրամիջոցներ օգտագործելու ավելի քիչ հակում ունեն: Նրանք ավելի շատ են զբաղվում մարմնամարզությամբ, օգտագործում են մեքենաների անվտանգության գոտիները, պատվաստվում են և մասնակցում բժշկական զննման ծրագրերի (GRALE, 2016)³:

3) ՅՈՒՆԵՍԿՕ (2016). Մեծահասակների ուսումնառությանը և կրթությանը նվիրված երրորդ համաշխարհային զեկույց: Տե՛ս՝ <http://unesdoc.unesco.org/images/0024/002459/245913e.pdf>



Հաջողված փորձ

Ավստրիական Alpha-Power ծագրի (2015թ. ՄԿԵԱ-ի Գրունտվիզ մրցանակի ազգային դափնեկիր) թիրախային խումբը տարբեր բուժհաստատություններում աշխատող բուժաշխատողներն էին: Հատուկ մշակված սեմինարների ընթացքում և նրանց հետ քննարկվել է ցածր տարրական կրթություն ունեցող հիվանդների հետ աշխատանքի նրբությունները: Բացի տարրական կրթության և առողջության փոխկապակցվածության մասին բուժաշխատողների իրազեկումից, ծրագրի մյուս նպատակներն էին՝

- տեղեկատվական նյութերի ստեղծում և տարածում գաղափարը կրողների և տարածողների ցանցի միջոցով,
- առողջությանն առնչվող թեմայի հասանելիության ապահովում
- ցածր կրթության մակարդակ ունեցող մարդկանց առողջապահական կարողությունների զարգացում:

Բոլոր ներգրավված կազմակերպություններում բուժանձնակազմի տարբեր մասնագիտացում ունեցող մասնագետներ վերապատրաստվել են որպես գաղափարի կրողներ և տարածողներ:

Հետազոտության տվյալներ

Մեծահասակների կրթությունը ոչ միայն նոր գիտելիք ձեռք բերելու լրացուցիչ մեթոդ է, այլև նախաձեռնողական մոտեցում, որը հզորացնում է մարդուն և ամրապնդում նրա մտավոր ու հոգևոր հավասարակշռությունը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեծահասակների կրթությունը մարդկանց հնարավորություն է տալիս ապրել ավելի ուրախ և բավարարված, հետևաբար նաև ավելի առողջ կյանքով: BeLL ծրագրի շրջանակներում կատարված հետազոտությունը ցույց է տալիս, որ հարցվածների 84%-ի ընկալմամբ մեծահասակների կրթության ծրագրերում ներգրավվելը դրական է ազդել իրենց մտավոր ու հոգևոր հավասարակշռության վրա, իսկ 83%-ի մոտ դրական փոփոխություններ են տեղի ունեցել կյանքի իմաստի պատկերացումների առումով (<http://www.bell-project.eu/cms/>):

Կյանքի հմտություններ անհատների համար



21-րդ դարում բոլորը պետք է ունենան կյանքի և աշխատանքի համար անհրաժեշտ հմտություններ ու կարողություններ, այդ թվում՝ այնպիսի հիմնական հմտություններ, ինչպիսիք են գրագիտությունն ու թվաբանությունը: Բացի այդ, կարևոր նշանակություն ունեն 2018թ. Եվրոպական միության խորհրդի կողմից ընդունված լրամշակված «Ցկյանս ուսումնառության առանցքային ունակությունների եվրոպական հիմնադրույթների համակարգ»-ում սահմանված ունակությունները: Մեծահասակների կրթությունն ապահովում է հմտություններ և ուսումնառության այնքան լայն շրջանակ, որն ի զորու է աջակցել մարդուն իր կարիերայի և կյանքի ողջ ընթացքում: ՄԿԵԱ-ն իր անդամ կազմակերպությունների և գործընկերների հետ համատեղ մշակել է «կյանքի

հմտությունների հիմնադրույթներ», որից հետևում է ցկյանս ուսումնառության անհրաժեշտությունը բոլորի համար: Նոր տնտեսական, տեխնոլոգիական և հասարակական զարգացումների բերումով մենք բոլորս ստիպված ենք լինելու բարելավել մեր կյանքի հմտությունները:

Մեծահասակների կրթությունը կարող է կյանքեր փոխել և տալ նոր հնարավորություններ: Այն տալիս է նոր աշխատանք գտնելու հնարավորություն, ուղի է հարթում դեպի ուսուցում, դպրոցական կրթությունը կիսատ թողածին վերադարձնում դասասենյակ, ակտիվացնում է մարդկանց ստեղծագործական ու մշակութային ձիրքերը և օգնում է հասնել առողջ ապրելակերպի ու բարեկեցության:



Հետազոտության տվյալներ

Մարդկանց համար կարևոր են ոչ միայն ուսումնառության ուղղակի արդյունքները. առկա տվյալները ցույց են տալիս, որ մեծահասակ սովորողները բազմաթիվ առավելություններ են ստանում մեծահասակների ոչ ֆորմալ կրթությունից: Նրանք ֆիզիկապես ավելի առողջ են և վարում են ավելի առողջ կենսակերպ: Նրանք ստեղծում են սոցիալական նոր կապեր և իրենց ընկալմամբ ավելի բարեկեցիկ են: Բացի այդ, մարդիկ, ովքեր մասնակցում են մեծահասակների իրերալ կրթությանը, ավելի մոտիվացված են մասնակցել ցկյանս կրթությանը և այն տեսնում են որպես իրենց կյանքը բարելավելու միջոց: Այս արդյունքների մասին տեղեկանում ենք լեզվի, արվեստի, սպորտի և քաղաքացիական կրթության և այլ տարբեր բնագավառներում դասընթացների մասնակիցներից: Կրթության ցածր մակարդակով մարդիկ մեծահասակների կրթությունից ավելի շատ օգուտներ են ստանում: (http://www.bell-project.eu/cms/?page_id=10)



Հաջողված փորձ

Մեծ Բրիտանիայում «Քաղաքացիների դասացուցակ» ծրագիրը անապահով սովորողների համար նախատեսված մեծահասակների ուսումնառության մոտեցում է, որի նպատակն է ապահովել յուրաքանչյուր քաղաքացու՝ անգլերենի, մաթեմատիկայի և այլ «կյանքի հմտությունների» մակարդակի բարելավումը: Այն հանգեցնում է աշխատատեղում և աշխատանք փնտրելիս, ուսումնառության մեջ, անձնական, ընտանեկան և համայնքային կյանքում ավելի լավ առաջընթացի, արդյունքների և ձգտումների: Այս մոդելը խրախուսում է տեղական ուսուցումը և ներգրավում է սովորողներին բովանդակության մշակման մեջ: Այս մոտեցմամբ կապ է ստեղծվում անգլերենի, գրագիտության ու թվաբանության բազային հմտությունների և (կամ անգլերենը այլ լեզվակիրների համար) թվային, ֆինանսական, առողջապահական և քաղաքացիական հնարավորությունների միջև (<https://www.learningandwork.org.uk/our-work/life-and-society/citizens-curriculum/>):

Այս ծրագրի կարևոր բաղադրիչ է սովորողի կարիքները բավարարելու համար անհրաժեշտ թվով հմտությունների և կարողությունների փոխկապակցումը: Ճկուն մոդելը կարող է հարմարեցվել և օգտագործվել տարբեր համայնքներում և ուսուցման համատեքստերում: Ուսումնական ծրագրին մասնակցային մոտեցումն ու մատուցումը բազմապատկում է ներգրավվածությունը և սովորողների շահագրգռվածությունը: Պիլոտային ծրագրի գնահատականների համաձայն՝ տարրական հմտությունների և ավելի լայն մակարդակում կարողությունների ու հմտությունների փոխկապակցումը հանգեցնում է սովորողների համար արդյունավետության բարձրացման, ներառյալ աշխատանք գտնելու հնարավորությունը, ուսուցման հանդեպ վերաբերմունքի փոփոխությունը, ավելի ակտիվ սոցիալական և քաղաքական ներգրավվածությունը:

Մաթեմատիկական ունակություններ

Ճանաչել և օգտագործել թվաբանական տվյալները առօրյա կյանքում. օգտագործել մաթեմատիկական խնդիրներ լուծելու, ապագան նկարագրելու, բացատրելու և կանխորոշելու համար:

Գրագիտության ունակություններ

Հասկանալ և ստեղծել գրավոր տեքստ
– հաղորդակցվել գրավոր տեղեկատվության հետ առօրյա կյանքում, տանը, աշխատավայրում և համայնքում
– օգտագործել այս ունակությունները քաղաքացիական կյանքին մասնակցելու համար:


Թվային ունակություններ

Ծանոթ լինել համակարգչային և համացանցային միջավայրին և կարողանալ օգտագործել թվային գործիքներ, մեդիան և ռեսուրսները, օրինակ՝ տեղեկատվություն գտնելու համար, գործնական խնդիրներ լուծելու, թվային բովանդակություն և արդյունք ստեղծելու համար: Կառավարել տվյալները՝ մեդիա հաղորդագրությունների բնույթի, մեթոդի և ազդեցության մասին քննադատական պատկերացում ունենալով:

Ֆինանսական ունակություններ

Կարողանալ կառավարել գումարը և օգտագործել տեղեկատվությունն ու խորհրդատվական ծառայությունները սեփական ֆինանսները արդյունավետ կառավարելու համար:

Օգուտներ



Բնապահպանական ունակություններ

Գիտակցել մեր առօրյա գործողությունների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա (օրինակ՝ ինչպես է սննդամթերքն արտադրվում և սպառվում, էներգիա, վերամշակում, թափոնների կրճատում): Հասկանալ կայուն զարգացման հայեցակարգը և ինչպես են այնտեղ միահյուսվում բնապահպանական, հասարակական և տնտեսական բաղադրիչները:

Անձնային և միջանձնային ունակություններ

Ինքնակառավարում, ինքնագնահատում և կարեկցանք. ի վիճակի լինել որոշումներ կայացնել և խնդիրներ լուծել, ի վիճակի լինել ուրիշների հետ հարգալից հաղորդակցման, կառավարել հակասությունները և համագործակցել ուրիշների հետ՝ ի հեճուկս բոլոր տարբերությունների:

Քաղաքացիական ունակություններ

Հասկանալ, թե ինչպես է իրականում գործում ժողովրդավարությունը, ինչպես մասնակցել ժողովրդավարական գործընթացներում և ներգրավված լինել համայնքներում: Հասկանալ և հարգել կրոնական և մշակութային տարբերությունները:

Նկարը՝ Կյանքի հմտություններ Եվրոպայի համար ծրագրից. <https://eaea.org/project/life-skills-for-europe-lse/>



Սոցիալական համախմբվածություն, արդարություն և հավասարություն




Կրթության մակարդակը մեծապես ազդում է մարդկանց հնարավորությունների վրա՝ սկսած նրանց աշխատանքի տեսակից մինչև կյանքի տևողությունը: Բավական մեծ թվով ուսումնասիրություններ փաստում են, որ կրթության ավելի բարձր նախնական մակարդակ և ավելի բարձր որակավորում ունեցող մարդիկ հակված են շարունակել սովորել և, որպես այդպիսին, կրթությունը շարունակելու ավելի շատ հնարավորություններ ունեն, քան կրթության ավելի ցածր մակարդակ ունեցողները:

Մեծահասակների կրթությունը նպաստում է սոցիալական շարժունության մեծացմանը: Մեծահասակների կրթությունը կարևոր է թե՛ առաջնային կրթությունը կիսատ թողածների համար, և թե՛ նրանց համար, ովքեր ուզում են շարունակել սովորել որպես մեծահասակ: Տարրական հմտությունների դասընթացներից մինչև այլընտրանքային միջնակարգ դպրոց կամ փախստականների համար լեզվի դասընթացներ՝ մեծահասակների կրթությունը տալիս է ոչ միայն

անհատական մակարդակում կյանքը բարելավելու բազմաթիվ հնարավորություններ, այլև ունի հասարակությունը համահավասարեցնելու, ավելի արդարացի դարձնելու ու տնտեսական աճին նպաստելու ներուժ: Սոցիալական ներառումը առավել բարձր մակարդակի հասցնելու համար անհրաժեշտ է առավել ակտիվ ներգրավել այն խմբերին, որոնք չեն մասնակցում կրթական տարբեր գործընթացների: Ճիշտ մոտեցում կիրառելու դեպքում կավելանա մարդկանց ներգրավվածությունը բոլոր ոլորտներում՝ լինի հասարակական կյանք, ժողովրդավարություն, տնտեսություն, արվեստ, թե մշակույթ:

Մեծահասակների կրթությունը հատկապես արդյունավետ է տարբեր տարիքի և ոլորտների մարդկանց միավորելու, փոխըմբռնման և հարգանքի մթնոլորտ ձևավորելու, ակտիվ քաղաքացիությանը նպաստելու, անձնական առաջխաղացման և բարեկեցության առումով: Արդյունքում շահում է հասարակությունը, ժողովրդավարությունը և սոցիալական խաղաղությունը:



Հետազոտության տվյալներ

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հասարակությունից օտարացման վտանգը ավելի բարձր է այն մարդկանց շրջանում, ովքեր իրենց կյանքը հաջողությամբ կառուցելու գործում սահմանափակ ազդեցություն ունեն (ունակություն, որը ձևավորվում և ձևափոխվում է կենսափորձի կուտակմանը զուգընթաց)՝ (<https://eaea.org/project/life-skills-for-europe-lse/>): Այս առումով մեծահասակների կրթության ներդրումը շատ արժեքավոր է: Մեծահասակների կրթության օգուտները՝ ի հավելումն ստացված գիտելիքի և որակավորման, երկու ճանապարհով են ձեռք բերվում:

1. Անձնական հատկանիշներ և ունակություններ. մեծահասակների կրթությունն ու ուսումնառությունը նպաստում են հմտությունների, կարողությունների և անձնական ռեսուրսների կատարելագործմանը, ինչպես նաև վերահաստատում են անբարենպաստ պայմաններում անհատի՝ ինքն իր կարողությունների հանդեպ հավատը:

2. Հասարակական շփում. մեծահասակների կրթությունը միևնույն և տարբեր սոցիալ-տնտեսական խմբերի ներկայացուցիչներին հնարավորություն է տալիս կապ հաստատել և շփվել, խրախուսում է սոցիալական համախմբվածությունը և սոցիալական ներգրավվածության հնարավորություն է ընձեռում:

Հաջողված փորձ

Շվեդիայում բավականին լավ արդյունքներ են գրանցել «Ուսումը խթանող ժողովրդական բաժրագույն դասընթացները», որոնք նպաստում են աշխատանք փնտրող երիտասարդների շարունակական կրթությանը: Դասընթացներից հետո մասնակիցների 40%-ը սկսել է կամ ավելի շատ աշխատել, կամ ավելի շատ սովորել, և ավելի քան երկու երրորդը հակված է շարունակել կրթությունը և հավատում է, որ կրթությունը դեպի աշխատաշուկա տանող ճանապարհն է: Շվեդիայի ողջ տարածքում ժողովրդական բաժրագույն դասընթացներ են կազմակերպվում փախստականների համար, որոնք նպաստում են շվեդական հասարակությունում վերջիններիս ինտեգրմանը, ինչպես նաև ստեղծվում են ուսումնական հնարավորություններ ապաստարան փնտրողների համար: Այս հատուկ ջանքերը հաջողությամբ են պսակվել, քանի որ դրանք հիմնված են արդեն իսկ գոյություն ունեցող մեծահասակների կրթության կառույցների և կազմակերպությունների վրա: Վերջիններս մշտապես ստանում են պետական աջակցություն:

Իսպանական Լա Վերնեդա – Մանտ Մարտի մեծահասակների կրթության կենտրոնում առաջին անգամ կենտրոնի կրթական ծրագրերից օգտվող մարդկանց ողջունելը համարվում է այնքան կարևոր, որ արվում է անհատապես: Կենտրոն հաճախող յուրաքանչյուր մարդու ժամանակ է տրամադրվում: Նախկին մասնակիցներն էական դեր են խաղում նոր ուսումնառուներին դիմավորելու, գրանցելու, խմբերի բաժանելու գործում, քանի որ նրանք ծանոթ են առաջին անգամ մասնակցելու փորձառությանն ու տիրապետում են համապատասխան հաղորդակցական հմտություններին՝ մասնակցությունը արդյունավետ դարձնելու համար: Նոր մասնակցի մակարդակը որոշվում է քննարկման ընթացքում և կողմերի համաձայնությամբ: Հատուկ ուշադրություն է դարձվում, որ խմբեր կազմելու գործընթացը հասկանալի և ընդունելի լինի յուրաքանչյուր մասնակցի համար: Կենտրոնի աշխատողներն ու կամավորներն իրենց հարցերում և շփումներում խուսափում են մասնակիների հետ «քննական» ոճի հարցուպատասխանից:

Զբաղվածություն և աշխատանք




Ուսուցման և աշխատանքի միջև դրական կապն ակնհայտ է. սովորող աշխատողները, ձեռներեցները և կամավորներն իրենց աշխատանքում ավելի արդյունավետ են և նորարարական, որն էլ իր հերթին ընկերություններին դարձնում է ավելի մրցունակ և հաջողակ: Թվայնացումը, միջազգայնացումը, սպասարկման կողմնորոշումը, ճկունությունը, աշխատաշուկայի բոլոր այս մեզա միտումներն ունեն մի ընդհանուր բան՝ դրանք աշխատողների որակավորումների փոփոխված և ավելի բարձր պահանջներ են սահմանում: Սա նոր երևույթ չէ, բայց պահանջների փոփոխության արագությունն ավելի մեծ է քան երբևէ:

Այս միտումներին զուգընթաց փոխվում էն այն արագությունը, որով աշխատողները պետք է հարմարվեն անվերջ փոփոխություններին և ձեռք բերեն նոր ունակություններ: Մասնագիտական ունակությունների թարմացումը դարձել է մշտական անհրաժեշտություն, իսկ մետաուսակությունները, ինչպիսիք են սոցիալական և հաղորդակցական հմտությունները, դարձել են խիստ կարևոր: Հետևաբար՝ օրինաչափ է, որ աշխատաշուկայի և ապագա աշխատանքի վերաբերյալ գրեթե բոլոր ուսումնասիրությունները

ները հանգում են մի եզրակացության, այն է՝ տեղի ունեցող փոփոխություններին դիմակայելու համար շարունակական վերապատրաստումները և աշխատատեղում սովորելը ուղղակի չունեն այլընտրանք ոչ միայն ցածր որակավորում ունեցող աշխատողների համար, այլ անխտիր բոլոր աշխատողների պարագայում: Ինչ վերաբերում է աշխատանք չունեցողներին, ապա մեծահասակների ուսումնառությունը նրանց դարձնում է ավելի դիմակայուն, մեղմում է գործազրկության արդյունքում ինքնավստահության կորստի հետևանքները:

Համապատասխան հմտություններ չունեցող անձինք չափազանց խոցելի են աշխատաշուկայի փոփոխականության պայմաններում. ուստի հարկավոր են շարունակական ներդրումներ կրթության և վերապատրաստման ոլորտներում: Մեծահասակների կրթության եվրոպական ասոցիացիան, կարևորելով հմտությունների կատարելագործումը և նոր հմտությունների ձեռք բերումը, գտնում է, որ զբաղվածության համար նպաստավոր է ցանկացած ուսումնական գործընթաց:





Հետազոտության տվյալներ

Միջին մասնագիտական ուսուցման զարգացման կենտրոնի 2012թ հետազոտությունը՝ «Ապագա հմտությունների առաջարկն ու պահանջարկը Եվրոպայում. կանխատեսում» եզրակացնում է, որ (...)անհրաժեշտ է պահպանել և/կամ ավելացնել կրթության և վերապատրաստումների ոլորտում կառավարությունների, ձեռնարկությունների և անհատների կողմից արվող ներդրումների մակարդակը նունիսկ ներկայիս ֆինանսական սահմանափակումների ճնշող պայմաններում: Հիմնականում մեծահասակ աշխատողներն են, որ պետք է դիմակայեն եկող փոփոխություններին, և ում անհրաժեշտ է պահել աշխատուժի համակարգում: Նրանց պետք է հնարավորություն տրվի սովորելու և տարբեր աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ որակավորում ստանալու: Եթե այսպիսի հնարավորությունները չբացվեն, կմեծանա ռիսկը, որ այսօրվա ցածր որակավորում ունեցող աշխատողները վաղը կդառնան երկարաժամկետ գործազուրկ (http://www.cedefop.europa.eu/files/5526_en.pdf):

Հաջողված փորձ

2018 թվականին Շվեյցարիայում նախաձեռնվել է աշխատանքային գործունեության տարրական հմտությունների խրախուսման պետական ծրագիր: Ծրագրն աջակցում է այն բիզնեսներին, որոնք ներդրում են կատարում իրենց աշխատողների տարրական հմտությունների զարգացման մեջ՝ օգնելով վերջիններիս դիմակայել աշխատաշուկայի փոխակերպումներին: Ծրագիրը հիմնվում է Շվեյցարական GO ծրագրի դրական փորձի վրա: Ծրագիրը ցույց տվեց, որ աշխատանքային գործունեության տարրական հմտությունների ուսուցումը շահեկան է ճգնաժամային պայմաններում, և աշխատողների համար (<https://www.sbf.admin.ch/sbf/de/home.html>):

Թվայնացում



Այսօր մեր հասարակությունը արձագանքում է չորրորդ արդյունաբերական հեղափոխությանը, այն է՝ թվայնացմանը: Արդյունքում ականատես ենք լինում աշխատաշուկաների էական վերափոխմանը, ինչպես նաև աշխատանքի ու կրթության էության և ապագա հեռանկարների հիմնարար փոփոխությունների: Յկյանս ուսումնառության մասնակից ցանկացած մեծահասակի համար խիստ կարևոր է հասկանալ թվայնացման ազդեցությունը, հնարավորություններն ու մարտահրավերներն աշխատանքի և ուսուցման համատեքստում: Դա կարևոր է անձնական զարգացման և գոհունակության, աշխատանք գտնելու, սոցիալական ներգրավվածության և ակտիվ քաղաքացիության տեսակետից: Մեր օրերում հանրային կյանքում ակտիվ մասնակցություն ունենալու համար յուրաքանչյուր ոք պետք է բավարար մակարդակով թվային հմտությունների տիրապետի:

ՄԿԵԱ-ն խիստ անհանգստացած է, որ եվրոպացիների 43%-ը չունի բազային թվային գիտելիքներ: Այս ոլորտում բավարար հմտություններ չունեցող մեծահասակներին մեկուսացման բարձր վտանգ է սպառնում: Մինչև 2024թ. թվային ոլորտի հմտություններ պահանջող աշխատանքների քանակը բարձրանալու է 12%-ով: Թվային գործիքների օգտագործումը հաջորդ 5 տարում դառնալու է գերկարևոր, սակայն թվայնացման ընձեռած հնարավորություններից օգտվելու հնարավորությունը բնավ հավասարապես չի բաշխված⁴: Խոցելի և մեկուսացած մեծահասակները կարող են կրկնակի անբարենպաստ դիրքում հայտնվել փոփոխությունների մասին իրազեկվա-

ծության պակասի կամ դրանց հարմարվելու միջոցներ չունենալու պատճառով: ՄԿԵԱ-ն կոչ է անում ապահովել բոլոր սկսնակ և միջին մակարդակներում գտնվող մեծահասակների՝ թվային հմտությունների դասընթացներին մասնակցությունը:

Տեխնոլոգիան փոխում է նաև սովորելու և սովորեցնելու ապագան՝ առաջարկելով անհամար գործիքներ կրթելու և կրթվելու գործընթացները բարելավելու համար: Կարևոր է, որ կրթություն տրամադրողները կարողանան օգտագործեն այդ գործիքները՝ կատարելագործելով իրենց աշխատանքը, ստեղծելով գործնական կիրառության հարթակներ, կիսելով գիտելիքը և հմտությունները: Ուստի անհրաժեշտ է բարելավել հասանելիությունը դեպի ենթակառուցվածքներ և վերապատրաստում:

Թվայնացումն արդեն փոխել և շարունակելու է փոխել մեր կենսապայմանները, շարժունությունը, միջավայրը, հաղորդակցությունը և կյանքի այլ ոլորտներ: Որպես հետևանք ուրիշ են են նաև այս փոփոխությունները կառավարելու և հասարակության մաս կազմելու համար անհրաժեշտ կյանքի հմտությունները: Մեծահասակների կրթությունը ոչ միայն տրամադրում է անհրաժեշտ հմտություններ, այլև կանխատեսում է ապագա զարգացումներն ու ձևավորում դրանք:

4) «Accenture»-ի 2017թ. «Ապագայի հմտություններ» հետազոտություն



Հետազոտության տվյալներ

Համաշխարհային տնտեսական ֆորումի 2016թ. Գլոբալ մարտահրավերների պատկերացում զեկույցը վերնագրած էր «Աշխատատեղերի ապագան. զբաղվածություն, հմտություններ և աշխատուժի ռազմավարություն չորրորդ արդյունաբերական հեղափոխության համատեքստում»: Ըստ զեկույցի՝ անհնար է դիմակայել ներկայիս տեխնոլոգիական հեղափոխությանը՝ ուղղակի ակնկալելով, որ մյուս սերունդի աշխատուժը ինքնըստինքյան ավելի պատրաստ կլինի: Իսիստ կարևոր է, որ բիզնեսները ակտիվ դեր ստանձնեն իրենց աշխատողների վերապատրաստման հարցում, որ անհատներն ավելի նախաձեռնող լինեն իրենց շարունակական կրթության հարցում, որ կառավարությունները հնարավորինս արագ և ստեղծագործաբար պարարտ հող ստեղծեն այս ջանքերին աջակցելու համար (http://www3.weforum.org/docs/WEF_Future_of_Jobs.pdf):



Հաջողված փորձ

HackYourFuture-ը կրթական ծրագիր է, որն օգնում է Նիդերլանդներում ապաստանած փախստականներին ծրագրավորում սովորել և դառնալ լիարժեք վեբ ծրագրավորողներ: Ծրագրի շրջանակներում մասնակիցներին սովորեցնում են ծրագրավորում և բացատրում, թե ինչպես է կարելի ձեռք բերել աշխատաշուկայում պահանջված հմտությունները, որից հետո ուսանողներին կապում են ծրագրավորողներ փնտրող ընկերությունների հետ: Այլ կերպ ասած՝ նախաձեռնությունն աշխատում է նախագծային (project based) ուսուցման հիման վրա, երբ մասնակիցները պետք է զարգացնեն սեփական գաղափարները, միասին ինչ-որ բան նախագծեն և իրագործման ընթացքում սովորեն: Ուսումնական նյութերի գերակշիռ մասը զետեղված են հատուկ մշակված վեբ կայքում առցանց ուսուցման համար, բայց հանգստյան օրերին Ամստերդամում տեղի են ունենում շաբաթական հանդիպումներ: Ուսուցման մեկնարկից մի քանի ամիս անց փախստականները սկսում են աշխատել իրենց ծրագրերի վրա: Մինչ օրս 20 մասնակցի հաջողվել է աշխատանք գտնել կամ աշխատանքային պրակտիկա անցնել հոլանդական մի շարք ընկերություններում: <http://www.HackYourFuture.net/#/>

Միգրացիա և Ժողովրդագրական փոփոխություն



Մեծահասակների կրթությունն էական դեր է խաղում ներկայիս Եվրոպայում փախստականների և միգրացիոն հիմնախնդիրների համատեքստում: Այնուամենայնիվ, քննարկումներում պակասում է այն հանրային քաղաքականությունների (ներառյալ կրթությունը) կարևորումը, որոնք միտված են օգտագործել միգրացիայի առավելություններն, աջակցել մարդկանց ինտեգրմանը և նվազեցնել տեղական ծառայությունների ու ենթակառուցվածքների վրա ընկնող ծանրաբեռնվածությունը:

Միջմշակութային երկխոսությունն ամրապնդում է տեղաբնակների և նոր քաղաքացիների կապերն ու փոխըմբռնումը, օգնում է միգրանտներին հասկանալ իրենց նոր հայրենիքի մշակույթն ու սոցիալական փոխհարաբերությունները, իսկ ընդունող քաղաքացիներին հնարավորություն է տալիս արժևորել ուրիշների սովորույթները և իրենց երկիրը դարձնել մասնակցային ժողովրդավար: Մենք պետք է ապահովենք հասանելի և մատչելի կրթություն, ճանաչենք

և վավերացնենք նախորդ փորձի միջոցով ստացած ուսումնառությունը, ինչպես նաև կազմակերպենք լեզվի դասընթացներ՝ հնարավորություն տալով միգրանտներին դառնալ իրենց նոր երկրների ակտիվ քաղաքացիներ: Մեծահասակների կրթությունը կարևոր դեր է խաղում նաև բարձր որակավորում ունեցող միգրանտների կարողությունները վերհանելու և ի շահ հասարակության օգտագործելու գործում: Միևնույն ժամանակ, կարևոր է որ միգրացիայի արդյունքում իրենց տեղը չգտնող մարդիկ և նրանց միավորող համայնքները ստանան այն հմտությունները, որոնք անհրաժեշտ են հասարակության մաս կազմելու համար:

Եվրոպայում տեղի են ունենում խոշոր ժողովրդագրական փոփոխություններ. ծերացող բնակչությունը ապրում և աշխատում է ավելի երկար: Տարեցները բնակչության զգալի մաս են կազմում և այդ թիվը մեծանալու միտում ունի, ինչը մեր հասարա-

Սովորողի պատմություն

Ֆաթիման մոր և երկու եղբայրների հետ ժամանել է Իռլանդիա 2013թ. նոյեմբերին: Առաջին երեք ամիսը նրանք ապրել են Դուբլինում, իսկ այնուհետև տեղափոխվել Տուլամոր: Ֆաթիման փախստական է: Նա ծնվել է Աֆղանստանում, հետո տեղափոխվել Սիրիա, որտեղ ապրել է երեք տարի: Իռլանդիայում մասնակցել է Արդարադատության նախարարության կողմից կազմակերպված լեզվի դասերին: Նա կարծում է, որ դասընթացները փախստականներին առանձնացնում են և չեն նպաստում ինտեգրացիային: Երբ նա տեղեկացավ *Մասնագիտական վերապատրաստման հնարավորություններ* ծրագրի մասին, դիմեց և արդեն ավարտում է իր առաջին տարին: Ծրագիրը երկամյա է. առաջին տարում ուսանողները ստանում են կրտսեր մասնագետի վկայական, իսկ երկրորդում՝ ավարտական վկայական: Ֆաթիման վստահ էր, որ կարող է երկու մասնագիտության գծով ստանալ ավարտական վկայականները և Տուլամորի շարունակական կրթության կենտրոնի աջակցությամբ նա մասնակցում է ֆիզիկայի և քիմիայի դասընթացներին: Իր գործնական աշխատանքների համար նա օգտագործում է Աթլոն ՏՏ կենտրոնի տարածքը: Ֆաթիման շատ նպատակասլաց է: Նա փայլուն անգլերեն է խոսում: Նա կարծում է, որ իրեն մեծապես աջակցել է Լաոյի և Օֆալի Կրթության և վերապատրաստման խորհուրդը և ապագայի հանդեպ մեծ հույսեր ունի:

կություններում ընթացող զգալի փոփոխությունների պատճառ է դառնում: Այս ժողովրդագրական փոփոխություններին արձագանքելու համար Եվրոպային պետք են քաղաքացիներ, որոնք որքան հնարավոր է երկար, առողջ և ակտիվ լինեն:

ՄԿԵԱ-ն հավատում է ակտիվ ծերացմանը և խրախուսում է տարեցների ակտիվ մասնակցության ընդհանուր տեսլականի ձևավորումը: Ուսումնառության միջոցով է, որ հասանելի են դառնում նման հնարավորություններ, իսկ ակտիվ ծերացումը հնարավոր կլինի երաշխավորել միայն ուշ տարիքում ուսումնառության այլընտրանքների առկայության պարագայում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կրթվող տարեցներն ավելի ակտիվ են, ավելի շատ են կամավորություն անում, ավելի երկար են աշխատում և ավելի առողջ են: Հետևաբար անհրաժեշտ է բոլոր տարեցներին ընձեռել բարձրորակ կրթական ծրագրերի մասնակցելու հնարավորություն, ինչն իր հերթին ենթադրում է քաղաքականության, ֆինանսավորման, և հասանելիության անհրաժեշտ շրջանակ: Ուսումնառությունը դրական ազդեցություն ունի նույնիսկ շատ մեծ տարիքում:

Բացի այդ, սերունդների միջև փորձի և գիտելիքի փոխանակումը հնարավորություն է տալիս տարեց՝ ավելի փորձառու մարդկանց, և երիտասարդներին օգտվել միմյանց գիտելիքներից, մյուս կողմից էլ միասնական տեսլականը նպաստում է միջսերնդային համախմբմանը և հանրային երկխոսությանը եվրոպական հասարակություններում:

Հետազոտության տվյալներ

Մեր ժամանակների մեծագույն մարտահրավերներից մեկը թերամտությամբ (դիմենցիա) տառապող մարդկանց խնամքն է, թե ինչպես նրանք կարող են պահպանել իրենց ինքնուրույնությունը և մնալ ակտիվ: Արդեն իսկ գոյություն ունեն այս հարցով զբաղվող հաստատություններ (Հոգեվեյը Նեդերլանդներում կամ Էիզբլրթ խնամքի տները Լեյքեսթերում՝ Մեծ Բրիտանիա), որտեղ թերամտությամբ տառապող մարդկանց մասին հոգ տանելու նորարարական, մարդասիրական մեթոդներ են մշակվում: Տարեցների ուսումնառությունը միշտ եղել է այս հաստատությունների և ծրագրերի անկյունաքար, և շահառուների մոտ նկատվում է դրական զգացմունքային և հոգեկան առողջության առաջընթաց: Համարվում է, (Snowden, 2001 in Simone and Scuille, 2006) որ մտավոր գործունեությունը խթանող վարժությունները դրական և տևական ազդեցություն ունեն ճանաչման վրա և նույնիսկ կարող են կանխել կամ կասեցնել թուլամտությունն ու Ալցիեյմերի հիվանդությունը: (<https://scholarcommons.scu.edu/cgi/viewcontent.cgi?article=1144&context=psych>).



Հաջողված փորձ

Եվրոպական NEET-U ծրագիրը միավորել է 21-րդ դարի երկու կարևորագույն սոցիալ-կրթական մարտահրավերները՝ ինչպես ակտիվացնել սոցիալական և կրթական ներուժ ունեցող տարեցներին և նրանց դարձնել կրթական, աշխատանքային կամ ուսուցման գործընթացներից դուրս մնացած կամ հասարակությունից օտարված երիտասարդների խնդիրներին արձագանքող գործոն:

Ծրագրի շրջանակներում նախաձեռնվել է քառօրյա հաքաթոն, որի մասնակից ավագ սերնդի ավելի քան 70 ներկայացուցիչներին խնդրել էին հավաքել կարևոր հիշողություններ պարունակող ընտանեկան լուսանկարներ կամ ուղղակի հին ֆոտոներ: Արդյունքում միջին և մեծ ֆորմատի «անալոգային լուսանկարները» պրոյեկտվեցին քաղաքի կենտրոնի դռներին, պատերին և լուսամուտներին կազմելով յուրօրինակ թվային ցուցահանդես: Եվ երիտասարդները, և՛ տարեցները ձեռք բերեցին նոր հմտություններ, վերահաստատեցին վստահությունը իրենց ուժերի, ունակությունների և փորձի հանդեպ: Տարեցները կարող են նոր գործելակերպ որդեգրել, հանդես գալ որպես միջնորդ, իրենց ցանցերն ու կապերը օգտագործել ի շահ սոցիալական նոր նախաձեռնությունների (<http://www.neetu.eu>):

Կայունություն




Այսօր կայունությունը գլոբալ մարտահրավեր է, որն ունի տնտեսական, սոցիալական և բնապահպանական դրսևորումներ: Մեծահասակների կրթությունը նպաստում է կայունությանը բոլոր երեք մակարդակներում՝ հմտությունների, գիտելիքի և կարողությունների զարգացման միջոցով: Սոցիալական ներգրավվածությունը, ակտիվ քաղաքացիությունը, առողջությունն ու անձնական բարեկեցությունը նույնպես ՄԿ առաջնահերթ նպատակների շարքում են: Մեծահասակների կրթությունն ապահովում է կայուն զարգացման համար անհրաժեշտ տեղեկատվություն, բանավեճի տարածք և ստեղծարար գաղափարներ:

Հետևելով Օրակարգ 2030-ին՝ մեծահասակների կրթությունը նպաստում է Կայուն զարգացման բոլոր 17 նպատակներին (ԿՁՆ)՝ կառուցելով փոփոխության հիմքերը սոցիալական, քաղաքական, տնտեսական, բնապահպանական և մշակութային ոլորտներում: 17 նպատակից յուրաքանչյուրում գոնե մի թիրախ ներառում է ուսուցում, վերապատրաստում, կրթություն կամ, առնվազն, իրազեկման բարձրացում կրթության ոլորտում: Միևնույն ժա-

մանակ մեծահասակների կրթությունն ու ցլյանս ուսումնառությունը ոչ միայն զարգացման լայն և ընդհանուր նպատակ է կամ ԿՁՆ-ին հասնելու մեթոդ: Ըստ ԿՁՆ4-ի՝ ներառական և որակյալ կրթության և ցլյանս ուսումնառության հնարավորություն պետք է ունենան բոլոր մարդիկ:

Մեծահասակների կրթությունը լուրջ ներդրում ունի կայուն և ներառական զարգացման Լիսաբոնյան օրակարգում: Շնորհիվ մեծահասակների կրթության՝ ավելանում են աշխատատեղեր, զարգանում է միասնական թվային շուկան: Աջակցելով կայունությանը՝ մեծահասակների կրթությունը կարող է նպաստել միասնական էներգետիկ համակարգի ձևավորմանը և կլիմայի փոփոխության առաջադեմ քաղաքականության մշակմանը: Մեծահասակների կրթությունը կարող է ամրապնդել միասնական շուկան՝ աշխատողներին տրամադրելով ազատ տեղաշարժի համար անհրաժեշտ հմտություններ, ինչպես նաև խթանել եվրոպական արժեքներն ու վստահությունը:





Հետազոտության տվյալներ

Կենսաբազմազանության և մշակութային բազմազանության փոխադարձ կապի ի մասին հետազոտությունները վկայում են, որ դեպքերի 95%-ում բարձր կենսաբանական և մշակութային բազմազանության միջև աշխարհագրական կապ գոյություն ունի (Alcorn, Clover 2010): Սակայն ավանդական տեղական գիտելիքի արժեքավոր աղբյուրները լիովին չեն գնահատվում կամ պատշաճ տարածում չեն ստանում և հղկվում համակարգված կրթական ծրագրերի շրջանակներում, մինչդեռ շատ առումներով դրանք էական ազդեցություն կարող են ունենալ համայնքի կայունության վրա, այդ թվում՝ բնական աղետների ռիսկերի մեղմացման կամ կլիմայի փոփոխություններին դիմակայելու հարցում: Մեկ այլ պարադիգմային փոփոխություն՝ խոցելիությունից մինչև համատեղ ուժերով կառուցվող ինքնաբավ համայնք, դժվար է կյանքի կոչել առանց տարեց քաղաքացիների մասնակցության կրթական ծրագրերի և նախառնությունների (Orlovic Lovren and Pejatovic 2015)⁵:



Հաջողված փորձ

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի կողմից ֆինանսավորվող «Նորարարությունը մեծահասակների կրթությունում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Շուքուրա ինտերակտիվ թանգարանը իրականացրել է «Արևային խոհանոց կամ պարաբոլիոդ արևային օջախ» ծրագիրը: Ծրագրի նպատակն էր ներկայացնել արևային էներգիայի առավելությունները և աջակցել դրա կիրառմանը Վրաստանի խոհանոցներում: Այս նպատակով Շուքուրա թանգարանը գնեց արևային էներգիայով աշխատող հինգ օջախ և բաժանեց դրանք Վրաստանի հինգ Մեծահասակների կրթության կենտրոններին: Ծրագիրը բարձրացնում է բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման մասին իրազեկվածությունը և տեղի բնակչությանն առաջարկում էներգաօգտագործման այլընտրանքային տարբերակ: Մեծահասակների կրթության կենտրոնները օգտագործում են արևային օջախներն ի օգուտ համայնքների՝ կազմակերպելով խոհարարական դասընթացներ և հանրային բացօթյա միջոցառումների ժամանակ: Ավելին՝ բոլոր ներգրավված կենտրոնները նախաձեռնել են էկոլոգիական խորհրդատվական ծառայություններ և աշխատում են տեղացիների հետ էկոլոգիական խնդիրների շուրջ տեղեկատվության տարածման ուղղությամբ՝ ներառյալ կայուն շենքերի և նյութերի, սոցիալ-բնապահպանական զարգացման:

Ավստրիայում էկո խորհրդատվությամբ զբաղվող Ումվելթբերաթունգ կազմակերպությունը մշակել է էներգաարդյունավետ վարորդական իրավունք (էՎԻ): ԷՎԻ-ն տնային տնտեսություններում, փոքր և միջին ձեռնարկություններում և համայնքներում էներգախնայող գործիք է՝ ստեղծված բավարարելու բնապահպանական և էներգախնայողության կարիքները: Առօրյայում էներգիայի խնայողությունը նպաստում է ծախսերի կրճատմանը, ինչը հատկապես կարևոր է աղքատության վտանգի առաջ կանգնած մարդկանց և ընտանիքների համար: Էներգիայի գիտակցված օգտագործումը և էներգաարդյունավետ կենսակերպի անցնելը, հետևաբար, կարող է նպաստել ծախսերի կրճատմանն ու օգնել աղքատության դեմ պայքարում: Աշխատանքի համատեքստում էներգիայի գիտակցված օգտագործումը նպաստում է մրցունակության բարձրացմանը ծախսերի կրճատման միջոցով (<http://www.umweltberatung.at/ueber-uns-international> and <https://energie-fuehrerschein.at/>):

5) Lovren, V. O., & Popović, K. (2018). Lifelong Learning for Sustainable Development—Is Adult Education Left Behind?. In Leal Filho, W., Mifsud, M., & Pace, P. (Eds.), Handbook of Lifelong Learning for Sustainable Development (pp. 1-17). Springer, Cham.

Մեծահասակների կրթությունն ու եվրոպական և միջազգային քաղաքականությունը



Ինչպես վկայում է այս մանիֆեստը, մեծահասակների կրթությունը եվրոպական և միջազգային քաղաքականության իրականացմանը նպաստող անհրաժեշտ գործոն է:

- Մեծահասակների կրթությունը ստանձնում է տեղեկատվական և կարողությունների հզորացման դերակատարում ուսումնառության և աշխատանքի հնարավորություններից ամենից քիչ օգտվող, ինչպես նաև տարրական կրթությունից ամենաքիչը օգուտ քաղած անձանց իրազեկելու և աջակցելու նպատակով:
- Մեծահասակների կրթությունն անհրաժեշտ է եվրոպայում տարրական ցածր հմտություններ ունեցող անձանց թիվը նվազեցնելու համար:
- Մեծահասակների կրթությունը նպաստում է եվրոպայի քաղաքացիների քննադատական մտածողությանն ու իրազեկմանը:
- Մեծահասակների կրթության շահառուները հնարավորություն են ստանում դառնալ ավելի ինքնավստահ, սոցիալապես ներգրավված, գտնել աշխատանք կամ աշխատանքում առաջխաղացում ունենալ:
- Մեծահասակների կրթությունը օգնում է բարձրացնել եվրոպայում զբաղվածության մակարդակը՝ մարդկանց վերապատրաստելով և վերադարձնելով աշխատաշուկա, վավերացնելով նրանց հմտությունները կամ նոր գիտելիք ստանալու հնարավորություն տալով:
- Մեծահասակների կրթությունը նպաստում է սոցիալական իրավունքների եվրոպական հե-

նայունը որպես սկզբունք իրականացնելուն՝ հատկապես կարևորելով կրթության, վերապատրաստման ու ցկյանս ուսումնառության առաջին կարևորագույն սկզբունքը: Այն նաև այլ սկզբունքների առանցքում է՝ կրթության կենտրոնում դնելով սովորողին և նրա կարիքները (օրինակ՝ սոցիալական պաշտպանություն, կյանք-աշխատանք հավասարակշռություն և այլն):

- Մեծահասակների կրթության գործընթացներն ընթանում են եվրոպական մարտավարական արժեքների՝ հավասարության, սոցիալական համախմբվածության, ակտիվ քաղաքացիության, ստեղծագործականության և նորարարության առանցքի շուրջ:
- Մեծահասակների կրթությունը նպաստում է Կայուն զարգացման նպատակներին՝ կարևորելով, որ դրանց հասնելու համար անհրաժեշտ է բոլորի միացյալ ներուժը: Մեծահասակների կրթությունը ապահովում է անհրաժեշտ գիտելիքն ու մոտեցումները:
- Մեծահասակների կրթությունը ուժեղացնում է քաղաքացիական հասարակությունը և աջակցում ակտիվ քաղաքացիներին սոցիալական և քաղաքացիական հմտությունների խթանման և ապահովման միջոցով, ինչպես նաև համագործակցելով այլ ՀՀ շահառուների հետ:



Քաղաքականության առաջարկներ

Մեծահասակների կրթության եվրոպական ասոցիացիան առաջարկում է եվրոպական և ազգային քաղաքականության մշակողներին՝

- Ճանաչել մեծահասակների ոչ-ֆորմալ ուսումնառության կարևորությունն ու օգուտները ոչ միայն անհատի, այլ նաև ժողովրդավարության, հասարակության, աշխատաշուկաների, առողջապահական և այլ համակարգերի համար:
- Ճանաչել մեծահասակների կրթությունն ու ուսումնառությունը որպես եվրոպայի առանցքային ռազմավարություն:
- Օգտագործել Եվրոպական սեմեստրը (European Semester) որպես մեծահասակների ուսումնառության աջակցության և զարգացման կարևոր գործիք:
- Եվրոպական կրթական տարածքը (European Education Area) դարձնել Եվրոպական ցլյանս ուսումնառության իսկական տարածք, որտեղ բոլոր ոլորտները կունենան հավասար կարգավիճակ և առաջնահերթություն:
- Մոտենալ Սոցիալական իրավունքների եվրոպական հենասյանը քաղաքացիակենտրոն տեսանկյունից՝ շեշտ դնելով ցլյանս ուսումնառության վրա:
- Աջակցել ցլյանս ուսումնառության խթանմանը Եվրոպական հարևանության երկրներում և այլուր:
- Ամրապնդել մեծահասակների (ոչ ֆորմալ) ուսումնառության ինստիտուտները, քաղաքականությունը և նախաձեռնությունները բոլոր մակարդակներում՝ Եվրոպական, ազգային, ռեգիոնալ, տեղական:
- Ցլյանս ուսումնառությունը ներառել պետական քաղաքականության և ծրագրերի ավելի լայն շրջանակներում (օրինակ՝ կայունություն, առողջապահություն, միգրացիա, զբաղվածություն):
- Ուժեղացնել քաղաքականության, պրակտիկայի և հետազոտության միջև կապերը՝ համագործակցության, գործընկերության և ուսումնառության մակարդակում:
- Սկիզբ դնել և/կամ խթանել քաղաքացիական երկխոսությունը մեծահասակների ուսումնառության շուրջ:
- Մշակել և գործարկել կառավարման և ֆինանսական համապատասխան համակարգեր՝ ապահովելով ցլյանս ուսումնառության մասին անհրաժեշտ տեղեկատվության տարածումը, որակի վերահսկումը և մասնակցության բարձրացումը:
- (Ֆինանսական) ներդրումներ անել (մեծահասակների) կրթության մեջ՝ դրանք համարելով ներդրում, այլ ոչ թե ծախս:
- Ստեղծել ցլյանս ուսումնառության ամբողջական համակարգեր, որոնք կնպաստեն առաջխաղացմանը՝ ի թիվս այլ գործոնների նաև վավերացման և ճանաչման միջով:
- Ֆինանսավորել և աջակցել ուսումնառությանը համայնքներում:

Աշխատատեղերից և տնտեսական զարգացումից մինչև միասնական թվային շուկա, կլիմայի փոփոխությունից մինչև ներքին շուկա, միգրացիայից մինչև գլոբալ խնդիրներ և ժողովրդավարական փոփոխություն՝ մեծահասակների կրթությունն աջակցում է եվրոպական և միջազգային մարտավարությունների իրականացմանը: Մեծահասակների կրթության դերը խիսկ կարևոր է դեպի միասնական, բարգավաճ, խաղաղ Եվրոպա տանող ճանապարհին: Այսինքն՝ այնպիսի Եվրոպա, որն ունակ է դիմակայելու ապագայի մարտահրավերներին:





**EUROPEAN ASSOCIATION FOR
THE EDUCATION OF ADULTS**

**Mundo-J, Rue de l'Industrie 10, 1000 Brussels
Tel. +32 2 893 25 22 eaea-office@eaea.org
www.eaea.org**